Երվանդ Նազարեթյան

Առավոտյան նուրբ շաղի հետ

Առավոտյան նուրբ շաղի հետ

Դու կարթնանաս ու կժպտաս,

Եվ ժպիտով քո նազանի

Մի աննման գարնանային օր կբացվի:

Սակայն շաղը կհեռանա՝

Վերածվելով ջինջ կաթիլի,

Իսկ դու սեր իմ, դու կմնա՛ս,

Չէ՞ որ վաղը քո ժպիտով

Շաղը պիտի վերածնվի:

Գարնանային ծաղկունքի մեջ

Դու կբացվես ու կժպտաս,

Քո ժպիտից բուրմունք կառնի բնությունը,

Ամենուրեք կտարածվի բարությունը:

Սակայն զարթոնքն այդ գեղանի կիեռանա՝

Վերածվելով մի հեքիաթի,

Իսկ դու սեր իմ, դու կմնա՛ս,

Չէ՞ որ վաղը քո ժպիտով

Նորից գարուն պիտի բացվի: